# ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՎ ԵՎ ՀԱՅՏՆԵՑԱՎ ՕՐՀՆԵԱԼ Է ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ



Թ՛ե եկեղեցական, թ՛ե ազգային կյանքում տոները, հիշատակության օրերը հաստատված են հատուկ առաքելությամբ՝ անհատի գիտակցության մեջ արթուն պահել պատմական իրողությունների հետ կապը: Դրանք ենթագիտակցական կապակցում են ստեղծում անցյալի և ներկայի միջև՝ երաշխավորելով ապագայի կերտումը:

Սուրբ Ծնունդը և Աստվածահայտնությունը Հայ Առաքելական եկեղեցին տոնում է նոր տոմարով՝ հունվարի 6-ին: Այդ օրը աշխարհի բոլոր Հայ Առաքելական եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ և կատարվում է ջրօրհնեքի արարողություն:

Երուսաղեմի և Ռուսաստանի հարավային շրջանների Հայ Առաքելական եկեղեցիներում նույնպես Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնակատարությունը կատարվում է նոր տոմարով՝ հունվարի 5-ին՝ Ճրագալույց Սուրբ Ծննդյան, իսկ հունվարի 6-ին՝ Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն (Մկրտություն):

Հայ Առաքելական եկեղեցին Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը և Մկրտությունը նշում է մեկ օր:

## Նոր Նախիջևանի Սուրբ Ծննդյան ավետիսները

Ավետիսները կրոնական տոնակատարության, Քրիսոսի ծննդյան հետ կապված շնորհավորական երգեր են, որոնք երգվում էին տարեկան մեկ անգամ՝ ճրագալույցի երեկոյան: Այդ շնորհավորումները որոշ չափով ստացել էին ծիսակատարական ձև:

Ավետիսները շատ հին են: Նրանք, անշուշտ, Ղրիմի գաղթականները բերել են Մայր Հայաստանից և երգվել են Ղրիմում հայ գաղութի գոյության ամբողջ ընթացքում: Ղրիմից 1779 թվականին գաղթելով Նոր Նախիջևան՝ հայերն իրենց հետ բերում են այդ ավետիսները:

Ղրիմից բերված սովորությունների համաձայն՝ Նոր Նախիջևանի գյուղերում երիտասարդությունը ամեն տարի թաթախման երեկոյան, այսինքն՝ հունվարի 5-ին, շրջում էր դռնեդուռ և երգելով ավետիսներ՝ շնորհավորում Քրիստոսի ծնունդը: Դա մի պարտադիր սովորություն էր, Սուրբ Ծննդյան տոնակատարության անբաժան մասը: Ժողովուրդը նախօրոք պատրաստություն էր տեսնում «ավետիսի տղոցը» ընդունելու համար: Ամեն մի տուն մասնավորապես նրանց համար թխում էր մեծ խալաճներ և գաթաներ՝ շարմուղուն ալյուրից:



Երիտասարդները, իրենց ընտանիքում թաթախման ծեսը կատարելուց հետո, գնում էին «ավետիսի տունը», այնտեղ բաժանվելով 3-4 հոգուց բաղկացած խմբերի, սկսում էին ման գալ տնետուն և շնորհավորել Քրիստոսի ծնունդը: Շնորհավորող երիտասարդներին տան տերերը նըստեցնում էին սեղան, հյուրասիրում մի-մի բաժակ գինով կամ օղիով, ուտեցնում կաղանդ, կորկոտ և այլն: Բացի դրանից տալիս էին մի-մի խալաճ, գաթա և մի քանի կոպեկ փող: Այդ նվերները տրվում էին թաղական «ավետիսի տան» օգտին: Գյուղի ամեն մի թաղ ուներ իր «ավետիսի տունը»: Այնտեղ հավաքվում էին ձմեռվա ամիսների երեկոներին երիտասարդ «կտրիճները» և ժամանակ անցկացնում: Ավետիսի տան անդամները կարող էին լինել միմիայն չամուսնացած երիտասարդները, ամուսնությունը զրկում էր նրանց այդ իրավունքից:

«Ավետիսների տները» գործում էին մինչև մեծ պահքը (պասը), մինչև գարնանամուտը, երբ սկսվում էին դաշտային աշխատանքները: Տարվա վերջին ընդհանուր ժողովով որոշում էին ինչպես ծախսել հավաքած եկամուտը: Այդ եկամուտներով առհասարակ Բարիկենդանի կիրակի օրը սարքում էին քեֆ, որ կոչվում էր «խոնաշմա»:

Նոր Նախիջևանի գյուղերում երգվող ավետիսների թիվը վեցն էր, որոնցից «Աստղ մը ելավը» և «Երանելին», երգվում էին բոլոր գյուղերում: Իսկ «Ցնծացեքը» երգվում էր միայն Թոփթիում, «Հիսուս-Հիսուսը»՝ միայն Չալթրում, «Խոսքն Աստծոն» և «Այսօր տոն է ծննդյան»՝ միմիայն Մեծ Սալայում:

Ստորև ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Մեծ Սալա գյուղում երգվող «Այսօր տոն է ծննդյան» ավետիսը:

Այսօր տոն է ծննդյան
Տյառն մերո և հայտնության,
Այդ արևն արդարության
Երևեցավ ի մեջ մարդկային,
Այսօր սուրբ կույսն անապական
Ծնավ երբեմն զանմահ արքայն.
Այսօր հրեշտակ երկնքից իջավ,
Ընդ մեզ օրհնեց զանմահ արքայն,
Այսօր դժողքն սարսեցավ,
Գունդք դիվաց հույժ տրտմեցավ
Այսօր չարն խնկահերան
Եվ ադամային ուրախացան.
Աստղ մի պայծառ ու պատվական
Երևեցավ ի հանդիստան...



Պատրաստեց՝ Արմինե Հովսեփյանը
Հոգևոր խորհրդատու՝
Տեր Անանիա քահանա Բաբայան

# Эстрадно-джазовый оркестр им. Кима Назаретова





Трудно переоценить вклад Кима Аведиковича Назаретова (1936–1993) в становление и развитие джаза на Юге России. Выдающийся пианист и дирижер, педагог, беззаветно преданный джазовому искусству, он обладал незаурядными организаторскими качествами.

С именем К. Назаретова связано формирование системы профессионального джазового образования в Донском регионе. Созданные и возглавляемые Кимом Аведиковичем эстрадно–джазовое отделение в Ростовском училище искусств (1974), кафедра эстрадной и джазовой музыки в Ростовской консерватории (1982) принадлежат к числу ведущих образовательных и исполнительских центров Российской Федерации и Восточной Европы.

Биг–бэнд, организованный и в течение двух десятилетий руководимый К. Назаретовым, стал лауреатом крупных джазовых фестивалей в Москве, Ленинграде, Тбилиси, Донецке, Одессе, Саратове, Кривом Роге, а также в Глазго, Дортмунде, Касселе и других городах бывшего Советского Союза и Европы.

Авторитет оркестра способствовал успешному воплощению в жизнь замечательной инициативы Маэстро, – уникальных фестивалях биг–бэндов, проводимых на донской земле (1984–1989). Еще один проект К. Назаретова, получивший широкую известность, – Всероссийский конкурс молодых джазовых исполнителей в Ростове–на–Дону, история этого артистического состязания продолжается и поныне.

Многогранные творческие достижения К. Назаретова получили высокую оценку: он был удостоен почетного звания заслуженного деятеля искусств России, а в 1992 году (первым из отечественных джазовых музыкантов) – ученого звания профессора. Имя К. Назаретова присвоено Ростовскому муниципальному кино–концертному центру и одной из музыкальных школ Ростова–на–Дону.

Джазовый оркестр имени Кима Назаретова с 1 января 2008 года является коллективом Ростовской государственной областной филармонии.

Художественный руководитель оркестра – заслуженный деятель Всероссийского музыкального общества, заведующий кафедрой эстрадной и джазовой музыки Ростовской государственной консерватории (академии) им. С. В. Рахманинова, профессор Петр Назаретов, музыкальный руководитель и дирижер – заслуженный деятель Всероссийского музыкального общества Аркадий Олейников – лауреаты международных и всероссийских джазовых фестивалей.



В состав оркестра входят как авторитетные ростовские музыканты, выступавшие ещё под руководством самого Кима Назаретова, так и талантливая молодежь – выпускники и студенты Ростовской консерватории.

Среди солистов оркестра: Олег Великанов, Евгений Белин, Анатолий Кирничный, Андрей Мордасов, Самир Камбаров, Олег Цыганов, Павел Филиппов, Валерий Крамаренко, Давид Сагамонянц. Солисты–вокалисты: Татьяна Куделько, Алла Тырон, Антон Краснюк и заслуженный артист России Георгий Каменский. С оркестром сотрудничает известная джазовая вокалистка Ирина Родилес (Москва),

В репертуаре оркестра – музыка различных стилей и жанров: джазовые пьесы начала XX века, хиты эры свинга, неувядаемые мелодии Гленна Миллера, Бенни Гудмена, Каунта Бейси, Дюка Эллингтона, обработки прославленных песен Джона Леннона и Пола Маккартни, Стива Уандера, Эндрю Ллойда–Уэббера, джаз–роковые композиции, а также произведения советских и современных российских композиторов.

Такая концепция в подборе репертуара обусловлена, во–первых, характером самих произведений, проверенных временем и являющихся, безусловно, всегда современными и привлекающими внимание ценителей джаза всех возрастов во всём мире. Второй причиной выбора такого художественного направления можно назвать объединяющее всех музыкантов, солистов и руководителей оркестра желание дарить людям радость и хорошее настроение от встреч с коллективом.

Практика неизменно показывает справедливость такого выбора, «предписанного» ещё самим Маэстро – Кимом Назаретовым, а также определяющего оркестр как самобытный и яркий коллектив. Концерты оркестра всегда проходят с ростовским южным темпераментом, на высоком профессиональном уровне, эмоциональном подъёме, характерном как для музыкантов, так и для зрителей.

В статусе коллектива Ростовской государственной областной филармонии в последнее время оркестр с успехом гастролировал в городах Ростовской области, Краснодарского края и в Украине.

Творческие планы оркестра им. Кима Назаретова связаны с дальнейшим изучением зрительских интересов к популярным произведениям, включением новых композиций в свой репертуар, привлечением к сотрудничеству известных солистов и талантливых молодых исполнителей, а также с расширением географии гастролирования. Всё это подчинено главной цели – возродить былую славу оркестра Кима Назаретова в России и за рубежом, когда коллектив выступал под непосредственным руководством Маэстро.